600.0481.24.12.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2019 թվականի №481Ա

ք.Երևան

«ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի հայտը և դեկտեմբերի 16-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Էներջի Էս Ջի Էյ» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2041 թվականի դեկտեմբերի 25-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:
2. Հաստատել «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվող «Էներջի Էս Ջի Էյ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՏՅԱՆ**

ք. Երևան
24 դեկտեմբերի 2019թ.